



## Յ Ո Ւ Թ Ա

(Ն Ա Դ Ս Օ Ն Ի Ց)



### Ա

Յըրիստոս լոգնատանց՝ աղօթք էր անում...  
Ազիւն քրտինք էր ճակատից հոսում...  
Մարդկան չարանենք նա ազգի համար  
Աղօթք էր ուղղում առ երկին արդար.  
Երկնալին հուրը ոգևորութեան  
Փալլում էր նորա դէմքին սրբազան,  
Եւ ցաւակցութեան ժպիտը բերնին՝  
Կրում էր նա իր տանջանքը վերջին.  
Փշեալ պսակը ճնշում էր նորան:  
Խաչի բոլորքը կանգնած էր խուժան  
Ու բիրտ քըքիջով ծաղրում, ծանակում...  
Եւ կոյր ամբոխը գեռ չէր հասկանում  
Ումն էր անարգում ալնպէս ծաղրաբար,  
Թշնամանանքով անզօր ու տկար:  
Ինչ էր արել նա? իբրև ըստրկի,  
Գողի, ինչու են մատնել տանջանքի?  
Եւ անմըտաբար ով է լանդգնել  
Աստուծոյ վերալ ձեռքը բարձրացնել  
Անարատ սիրով նա աշխարհ մտաւ,

Ուսոլց նա, տանջուեց և աղօթք արաւ—  
Բայց նորա անմեղ արիւնով արգար  
Արատաւորեց իրան ողջ աշխարհ...  
Արգէն կատարուեց...



## Բ

Եւ կէս գիշերին  
Փալլում էր վերից աստղավառ երկին.  
Կապոյտ կամարում՝ հեղիկ ու խաղաղ  
Ահա երևաց լուսինն ոսկեշաղ,  
Երբեմն տխուր՝ ամպերի տակից  
Նա աղօտ լուսով փալլում է վերից,  
Երբեմն կրկին նոտ պայծառ շողով  
Լուսաւորում էր Գողգոթան դողով:  
Ցածում, միգապատ խաւարի միջից,  
Տեսանելի էր քաղաքը վերից,  
Նորա բարձունքում հսկալի նման՝  
Երևում էին խաչերը դաժան.  
Երկուսի վերալ մահապարտները  
Դեռ կախուած էին. լուսնի շողքերը  
Անհուն բարձունքից նալում էին ցած:  
Նոցա երեսին դալուկ, գունատուած:  
Բայց երբորդ խաչը թափուր էր մնացել.  
Քրիստոսին արդէն վար էին բերել  
Բարեկամները, դրել գերեզման,  
Զերմ արցունքներով լուացել տապան:



## Գ

Այն ով է գաղտնի՝ հեծկլտում, սգում  
 Միջին խաչի մօտ՝ մագերը փետում?  
 Ով այդ մարդը? Նորա երեսին  
 Գծուած է տանջանք, տանջանք դառնագին,  
 Գուցէ բուժուելու ծարաւով լցուած՝  
 Հեռու երկրից է ըշտապով եկած,  
 Որ Յիսուս նորա ծանր տանջանքին  
 Թեթևութիւն տալ խօսքով երկնալին?  
 Աղերսով լցուած՝ նա պատրաստւում էր  
 Շուտով գալ, ընկնել Քրիստոսի ոտներ—  
 Յանկարծ լսում է՝ թէ նա, Որին որ  
 Արքայ էր կոչում ամբոխը բոլոր,  
 Որը լոյս վառեց ամբողջ աշխարհում,  
 Որ բագիններին կնդրուկ չէր ծխում,  
 Որ հալածում էր չարը բաց առ բաց, —  
 Ահա նա մեռաւ, ամենքից ատուած,  
 Մարդկալին ազգից հալածուած իսպառ,  
 Մեռաւ լոգնատանջ ու բազմաչարչար!..  
 Կամ գուցէ գաղտնի աշակերտ՝ է նա,  
 Որ իր Ուսուցի սուրբ խաչի վերայ  
 Յենել է գլուխը, լոգնած, դալկացած,  
 Վշտերով ու ջերմ աղերսով լցուած?  
 Կամ թէ չը ներուած՝ ծանր մեղքերով  
 Յանցաւոր է մի, որը ըշտապով  
 Եկել է ալստեղ, նեղուած ու տանջուած,  
 Իր ծանր մեղքը քաւելու չոքած? —  
 Ոչ, Յուդան է դա!.. Ալստեղ չէր եկել  
 Աղօթելու նա — երբէք աղօթել  
 Չէր համարձակուիլ մեղսալից հոգով.  
 Ալստեղ չէր եկել նա այն փափագով,

Որպէս զի հրաժեշտ, հրաժեշտ տալ վերջին  
Անմեղ Յիսուսի անշունչ դիակին.  
Նա ինքն անգամ չը գիտէր բընաւ՝  
Ինչու և ինչպէս նա այստեղ եկաւ:



## Դ

Երբ դատապարտուած, տանջանքի մատնուած,  
Խուռն ամբոխով հոծ շրջապատուած,  
Իր պատժավալըն էր Քրիստոսը գնում  
Ու յոգնած՝ խաչը իր ուսին տանում,—  
Յուղան, թագնուած, տեսաւ տանջանքը  
Ու խղճահարուած զգաց յանցանքը՝  
Թէ Ումն էր ատում նա անմըտօրէն,  
Թէ Որի՛ կեանքը ծախեց նենգօրէն:  
Հասկացաւ Յուղան, որ արդար երկնում  
Նա չի ըստանալ իր մեղքին ներում.  
Եւ ըստրկական երկիւղը անզօր —  
Դաժան ընկերը գործի յանցաւոր —  
Դըրել էր բոյնը նորա սրտի մէջ.  
Այբողջ գիշերը տեսնում էր անվերջ,  
Երևակայում, Քրիստոսին տեսնում.  
Մռալլ պատկերը նա ճիգ էր թափում  
Իր հիւանդ գլխից իսպառ հեռացնել,  
Զուր աշխատում էր անվրդով ննջել,  
Որ ամենալին բան բնաւ մոռանալ,  
Գիշերը հանդարտ նա հանգստանալ.  
Բայց հէնց փակում էր նա իր աչքերը —  
Նորա առաջ էր ահեղ պատկերը! —



## Ե

Ահա նա, հիւծուած, մաշուած տանջանքից  
Սուրբ ճշմարտութեան Առաքեալն անբիծ!  
Յոգնատանջ, մատնուած արհամարհանքի  
Ու խաչուած ձեռքով կատղած խուժանի  
Աստուածն է, Որին կոյր ու կաշառուած  
Դատաւորներից մահ էր վճռուած.

Ահա նա, ահա!.. Հեղիկ աշքերում  
Լուռ կշտամբայք է անբարբառ փալլում.  
Սիրոյ պսակը, փշեալ պսակը,  
Ծակում, խոցում է Փրկչի ճակատը.  
Նորա բարկացած շրթունքից, կարծես,  
Դատավիճու է հնչում խստապէս...

«Հեռո՛ւ, անարատ, դու տեսիլ արդար!  
Հեռու, մի տանջիր սիրտս ցաւագար!..  
Թո՛ղ գոնէ մի ժամ, գոնէ մի վայրկեան  
Զապրեմ... չը լիշեմ... մոռնամ ամեն բան...  
Նալի՛ր — մատնիչդ ոտներիդ տակին.

Աղի արցունք է թափում դառնագին...  
Օ, նելիր!.. սիրտս քո մի հայեացքից  
Կտրատւում է, ահա... հեռացիր ինձնից!..  
Տես — ես պատրաստ եմ լուանալ իսպառ  
Իմ արցունքներով նեսդ համբոլրս չար...  
Օ, թո՛ղ անցածը բնաւ մոռանամ,  
Աղօթքով հոգուս թեթևութիւն տամ:  
Դու Աստուած ես... Դու կարող ես ներել!..

• •

Իսկ ես? գիտէի արդեօք կարեկցել?

Ոչ, էլ չեմ կարող յանցանքս քաւել!»



## Զ

Արդեօք ուր փախչի մռալլ մտքերից?  
 Արդեօք ուր փախչի, ազատուի պատժից?  
 Կուրծքը լոգնած է, իսկ խելքը տկար,  
 Հոգին լուզուած է, տանջուած շարաշար:  
 Եւ գիշերալին անդորրութեան մէջ՝  
 Արձանի նման՝ կանգնած է անվերջ  
 Անշարժ ու անխօս նոյն ուրուականը —  
 Մեղադրութեան լուռ գրաւականը...  
 Իսկ ալստեղ, շուրջը, պայծառ լուսնեակով,  
 Սիրախորժ գարնան հրապոյր շնչելով,  
 Աշխարհի վերալ գիշերը փռուեց,  
 Եւ իւր մտախոհ փայլը տարածեց:  
 Թափանցիկ մէգում կեդրոնն արծաթէ  
 Ընկղմուած, սուզուած՝ հանգիստ քնած է...



## Է

Փախիր, մատնիչ, փախիր մարդկանցից.  
 Սակալն իմացիր, որ քո մեղսալից  
 Հոգին ոչ մի տեղ հանգիստ չի գտնիլ!  
 Ուր էլ որ լինիս, բնաւ չի թողնիլ  
 Քեզ երբէք մենակ քո ուրուականը —  
 Մեղադրութեան լուռ գրաւականը:  
 Փախիր ալդ խաչից սուրբ, անապական.  
 Դու համբոյրներով մի պղծիր նորան —  
 Նա անարատ է, անբիծ և օրհնուած  
 Դառն տանջանքով Քրիստոսի խաչուած!..

• • • • • • • • • • • • • • •

Եւ նա փախչում էր!..



Է

Կէս հորիզօնը

Ալ բոցը գըկեց. լեռնոտ կեդրոնը  
 Փալլի ալիքով շառագունուեցաւ.  
 Բլուրների ետև ահա բարձրացաւ  
 Ուկէ պըսակով արևը պայծառ,  
 Ամեն ինչ զարթնեց... անտառը դալար,  
 Դաշտերի գոռող ալդ հսկան հպարտ,  
 Շարժում է ճիւղերն, խշում տնընդհատ.  
 Եւ նորա խորքում առուն է հոսում  
 Արծաթ-ջրերով, անվերջ կարկաջում...  
 Անտառում, ուր միշտ մշուշ է, խաւար,  
 Ուր չի թափանցում արևը պայծառ,  
 Մոալլ գիտէ է օրօրուում կախուած.  
 Եւ կաղամախը վերևէց սփռած  
 Իր կենդանարար զմըուխտ հովանին,  
 Բարեկամի պէս՝ գրկել է ալն դին:  
 Մեռաւ նենք Յուղան... նա չը դիմացաւ  
 Խուլ տանջանքների կըրակին. մեռաւ՝  
 Առանց հաշտութեան արտասուքների,  
 Առանց զղջումի, ցանկութիւնների:  
 Բայց մինչև նորա վերջին վալրկեանը  
 Միշտ օրհասական ալն ուրուականը  
 Յանդիմանութեամբ նորա առաջին  
 Լուռ լայտնուում էր գիշերը մթին:

Նոյն դատավճիռն ահեղ ու դաժան,  
Կարծես, հնչում էր բերնից սրբազան,  
Նորա արիւնոտ ճակատին լոգնած  
Տանջանքի փշեալ պսակ էր դրած!

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.

